ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11/05/2016

Քաղաք Երևան, մայիս 11, երկու հազար տասնվեց թվական

Էրեբունի Պլազա բիզնես կենտրոնում 2016 թվականի մայիսի 11-ին անցկացվեց միջգերատեսչական հանձնաժողովի նիստը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Սուրեն Քրմոյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Դավիթ Ավետիսյան - ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ
Մնացական Մարտիրոսյան - ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան
Աննա Կարապետյան - ՀՀ Ազգային ժողով
Սերգեյ Առաքելյան - ՀՀ հատուկ քննչական ծառայություն
Սարգիս Հովհաննիսյան - ՀՀ դատական դեպարտամենտ
Հակոբ Հակոբյան - ՀՀ քննչական կոմիտե
Տաթևիկ Նահապետյան - ՀՀ ֆինանսների նախարարություն
Հեթում Համամճյան - ՀՀ ֆինանսների նախարարություն
Հասմիկ Կամենդատյան - ՀՀ ֆինանսների նախարարություն
Արմինե Մաթոսյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Արամ Սմբատյան - ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
Հրանտ Թորոսյան - ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
Լուսինե Սարգսյան - ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
Արթուր Հովհաննիսյան - ՀՀ Փաստաբանների պալատ
Հայկ Խեմչյան - ՅՈՒՆԻՍԵՖ (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ)
Կարինե Քեշաբյան - ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն (INL project)
Մարիցա Հովհաննիսյան - ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն (INL project)
Արման Հովհաննիսյան - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
Ռոման Ահարոնյան - ՀՀ Փաստաբանական դպրոց
Արփինե Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի օգնական (քարտուղար)
Լևոն Ավետիսյան - ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժին
Արամ Դարբինյան - ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժին

Արսեն Նավասարդյան - ՀՀ արդարադատության նախարարության «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ

Արայիկ Ջրաղացպանյան - թարգմանիչ

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Պրոբացիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի քննարկում:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Ողջույնի խոսքով հանդես եկավ նիստը նախագահողը: Նա բաց քննարկման կոչ արեց և առաջարկեց քննարկել խնդրո առարկա նախագծերը:

Նիստի մասնակիցները միաձայն հաստատեցին օրակարգը:

Օրակարգի միակ հարցի հետ կապված ներկայացվեց «Պրոբացիայի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Նախագծերի փաթեթի ներկայացումից հետո ելույթ ունեցան նիստի մասնակիցները, որոնք ներկայացրեցին նախագծերին վերաբերող հարցեր.

Դավիթ Ավետիսյան, Մնացական Մարտիրոսյան

Արդյո՞ք նպատակահարմար չէ պրոբացիայի ծառայության կողմից անկախ հանձնաժողովներին խորհրդատվական զեկույցների տրամադրումը սահմանել որպես իմպերատիվ պահանջ:

Ի՞նչու պրոբացիայի ծառայությունը մինչդատական վարույթում խորհրդատվական զեկույցներ չի ներկայացնելու:

Սերգեյ Առաքելյան

Ի՞նչ կարգով են քննվելու պրոբացիայի ծառայողների կողմից կատարված հանցագործությունները, մասնավորապես՝ քննչական ենթակայության ո՞ր տեսակն է կիրառվելու:

Արդյո՞ք պրոբացիայի շահառուի կողմից իր բնակարան պրոբացիայի ծառայողի մուտքը և ելքը խոչընդոտելու համար նախատեսված վարչական պատասխանատվության կառուցակարգը չի խախտում անձի՝ բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը:

Արթուր Հովհաննիսյան

Հանցագործություն կատարելու դեպքում անջատ պահվելու՞ են պրոբացիայի այն ծառայողն ու շահառուն, ում նկատմամբ այդ ծառայողն ապահովել է պրոբացիայի իրականացումը:

Արման Հովհաննիսյան

Ի՞նչ պահանջների պետք է բավարարի անձը, որպեսզի հավակնի պրոբացիայի ծառայությունում պաշտոն զբաղեցնելուն:

Արամ Սմբատյան

Պրոբացիայի բոլոր ծառայողնե՞րն են իրականացնելու հաշտարարություն:

Արդյո՞ք նպատակահարմար չէ հաշտարարությանն առնչվող ծախսերը հատուցել նաև հաշտարարության կողմերի հաշվին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել նախագծերի փաթեթում՝ հիմք ընդունելով քննարկման արդյունքում արված առաջարկություններն ու դիտողությունները:
2. Սույն քննարկման հրապարակայնությունն ապահովելու համար նիստի արձանագրությունը նիստի մասնակիցների հետ համաձայնեցվելուց հետո տեղադրել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում:

Արձանագրությունը բաղկացած է 3 էջից:

ՀՀ արդարադատության
նախարարի տեղակալ՝

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Նիստի քարտուղար՝

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ